ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՄԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Կատայքի մարզի Նաիրի համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» Նաիրի համայնքի ավագանու որոշման նախագծի և «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» Նաիրի համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության Կատայքի մարզի Նաիրի համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» Նաիրի համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ N 1) և «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» Նաիրի համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ N 2) վերաբերյալ հայտնում ենք, հետևյալը՝

1. Նախագիծ N 1-ին կից ներկայացված հավելվածների վերնագրերն անհրաժեշտ է համապատասխանեցնել Նախագիծ N 1-ի 2-7-րդ կետերի բովանդակությանը:

2. Նախագիծ N 1-ի 9-րդ կետով սահմանվում է, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագիծ N 1-ով նախատեսվող որոշումը կարող է հրապարակվել 2025 թվականի հունվարի 1-ից հետո, ուստի առաջարկում ենք Նախագծի 9-րդ կետով սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

3. Նախագիծ N 2-ին կից ներկայացված Հավելված N 1-ի (այսուհետ՝ Հավելված N 1) և Հավելված N 2-ի վերնագրերն անհրաժեշտ է գրել մեծատառերով՝

նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

4. Հավելված N 1-ի 1-ին կետի 2-րդ ենթակետում անհրաժեշտ է ***«սույն կետի «ա» ենթակետով»*** ձևակերպումը հստակեցնել, մասնավորապես նշել որ կետի, որ ենթակետի ***«ա»*** պարբերության մասին է խոսքը:

5. Հավելված N 1-ի 9-րդ կետում բացակայում են ***խաղատների և շահումով խաղերի*** համար սահմանված տեղական տուրքերի դրույքաչափերը, նկատի ունենալով՝ «Տեղական տուրքերի և դրույքաչափերի մասին» օրենքի կարգավորումները անհրաժեշտ է նշված տուրքերի դրույքաչափերը լրացնել:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

Recoverable Signature

X

ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ